# Առաջին գնդակը դրոշակը տանողին է խփում




## — Այդ ես եմ բարձրացրել եռագույնը...

1988 Թ., ՄԱՅԻՍԻ 28, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

**... Թողեք, որ ասեմ, թե մի օր-այն երեկ էր- մի կախարդիչ օր, ազատության Աստվածային փայլով ու գեղեցկությամբ զարդարուն, և արշալույսներով իր դյութական ճակատը պսակված, և իր թովիչ աչքերից կյանքի և երջանկության ցոլքերը արձակելով մեր հայրենիքի դուռը ծեծեց ու ասաց.**

**— Տես, ճայիր, ես եմ ահա, քո երազած Ազատությունը. տես ինչ գեղեցիկ եմ և քոնն եմ:**

**Բայց մենք հայ չէինք, այլ թուրքահայ, ռուսահայ, պարսկահայ, ամերիկահայ, նաև ղարաբաղցի, վանեցի, մըշեցի, երևանցի, կարնեցի և նրան՝ մեր փրկչին՝ չհասկացանք:**

**Եվ ազատությունը մեր դռանը լացեց, մղկտաց ու հեռացավ:<br>Ահ, թե մենք միայն ՀԱՅ լինեինք այդ օրերին...<br>Ես աննուամենայնիվ հավատ ունեմ<br>Խորունկ ու ժայռի պես անսասան, որ<br>Նա պիտի գա վերստին, Ազատության<br>Այն աստվածային գեղեցկուհին:**

**(ԱՎ. ԱՀԱՐՈՆՅԱՆ)**